# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2023 թվականի N 29-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 13/63 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03092021-08-0042 վկայական) Ա.Շիրակացու փողոց N 13/63 հասցեի 318,96 (երեք հարյուր տասնութ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0346-0140 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.037467 (զրո ամբողջ երեսունյոթ հազար չորս հարյուր վաթսունյոթ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի՝ 2021 թվականի սեպտեմբերի 10-ի N 10072111 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, սահմանել աճուրդի մեկնարկային գինը՝ 22000000 (քսաներկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) |
|---|---|---|
| Վ.Սամսոնյան | | Կ.Մալխասյան |
| Գ.Մելիքյան | | Կ.Ասատրյան |
| Մ.Սահակյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Ն.Պողոսյան | | |
| Գ.Պասկևիչյան | | |
| Խ.Վարաժյան | | |
| Ս.Հովհաննիսյան | | |
| Հ.Ասատրյան | | |
| Ս.Խուբեսարյան | | |
| Վ.Մկրտչյան | | |
| Ա.Բեյբուտյան | | |
| Հ.Նիկողոսյան | | |

4

Զ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Վ.Հակոբյան
Կ.Սոսյան
Ս.Ադամյան
Գ.Մանուկյան
Հ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Գյումրի,
«14» փետրվարի 2023 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«11» մայիսի 2023 թվականի N 102-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 29-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ա.Շիրակացու փողոց N 13/63 հասցեի անշարժ գույքը աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 29-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) 2-րդ կետի «22000000» (քսաներկու միլիոն) թիվը և բառերը փոխարինել «20000000» (քսան միլիոն) թվով և բառերով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
|---|---|---|
| Վ.Սամսոնյան | | Կ.Ասատրյան |
| Գ.Մելիքյան | | |
| Լ.Սանոյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Ն.Պողոսյան | | |
| Գ.Պասկևիչյան | | |
| Ս.Հովհաննիսյան | | |
| Խ.Վարաժյան | | |
| Հ.Ասատրյան | | |
| Ս.Խուբեսարյան | | |
| Ա.Բեյբուտյան | | |
| Ե.Խանամիրյան | | |
| Լ.Մուրադյան | | |
| Հ.Ստեփանյան | | |
| Վ.Հակոբյան | | |
| Ս.Ադամյան | | |
| Կ.Սոսյան | | |

Գ.Մանուկյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի
«11» մայիսի 2023 թվական

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  N _01_/23**

Աճուրդը չկայացած համարելու մասին

«19»  ապրիլի  2023 թ.

Աճուրդային հանձնաժողովը՝ ստեղծված Գյումրու քաղաքապետի 23.05.2022 թ. N 1077-Ա որոշման համաձայն
/տվյալ հանձնաժողովի ստեղծման մասին/

Կազմով՝
Ա.Պապիկյան, Հ.Գասպարյան, Հ.Սահակյան, Ա.Մարգարյան, Մ.Մկրտչյան, Ա.Չախոյան, Ս.Գրիգորյան
Որոշեց 2023 թ. ապրիլի « 19 » - ին անցկացված աճուրդի արդյունքներով հետևյալ գույքի (օբյեկտի) մասնավորեցումը համարել չկայացած:

| հ/հ | Գույքի (օբյեկտի) անվանումը | հասցեն | Աճուրդում առաջարկված Առավելագույն գինը /դրամ/ | Աճուրդի չկայացման պատճառները |
|---|---|---|---|---|
| 1. | Ավտոտնակներ | Շիրակացու փողոց N 13/63 | - | Հայտեր չի ներկայացվել |

Կ.Տ.
**Աճուրդավար՝** **Ա.Պապիկյան**

**Արձանագրող՝** **Ս.Գրիգորյան**

**Հանձնաժողովի անդամներ՝**

**Հ.Գասպարյան**

**Հ.Սահակյան**

**Ա.Մարգարյան**

**Մ.Մկրտչյան**

**Ա.Չախոյան**